



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է **գործընթացների, ապրանքների ու ծառայությունների** արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«Լուկաշին» գյուղատնտեսական ասոցիացիա ՍԿ

- սպառողական կոոպերատիվ -

Կազմակերպության մասին

Հասցե՝ Հայաստան, Արմավիրի մարզ, 0927, Լուկաշին համայնք, Հունան Ավետիսյան փող 8 շենք,
Հիմնական արտադրատեսակներ՝ Մրգերի ու բանջարեղենի մշակում ու պահպանում
ISIC՝ 1030
Աշխատակիցների քանակ՝ 134 (55 կին և 79 տղամարդ)
Հիմնական շուկան՝ Հայաստան, Ռուսաստանի Դաշնություն, ԵՄ երկրներ
Հիմնադրման տարեթիվ՝ 1995



«Լուկաշին» ՍԿ-ն հիմնադրվել է որպես համայնքային փոքր ձեռնարկություն (ՓՄՁ), 42 ֆերմերի համատեղ ուժերով: Հիմնական գործունեությունը բարձրորակ չրերի (ծիրան, դեղձ, սալոր, խնձոր, տանձ, թուզ և խաղող) արտադրությունն է: Պտուղներն աճեցնում են Արարատյան դաշտի սրտում գտնվող Լուկաշին գյուղական համայնքի ֆերմերները: Միջին արտադրական հզորությունը կազմում է 14,000 կգ/տարեկան պատրաստի արտադրանք (չրեր), որոնք հիմնականում սպառվում են ազգային շուկայում և մասամբ արտահանվում Ռուսաստանի Դաշնություն և Եվրամիության երկրներ: Ավելի էներգաարդյունավետ արտադրություն ձեռք բերելու դրոպապատճառներով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

Առավելություններ

- 14 ՌԱՄԱ տարբերակների իրականացում
- Էլեկտրաէներգիայի սպառումը կրճատվել է 21%-ով
- Բնական գազի սպառումը կրճատվել է 12%-ով
- Արտադրության ընդհանուր տարեկան ծախսերը կրճատվել են 13%-ով (մեկ արտադրական սեզոնում)
- Բարելավված բնապահպանական կատարողականություն, աշխատանքային պրակտիկա և արտադրանքի մրցունակություն
- Արևային էներգիայի օգտագործման ավելացում ջեռուցման և չորացման գործընթացներում

Action implemented by:





Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ տարբերակներ: Այնուհետև ընկերությունը կիրառել է քայլ առ քայլ մոտեցում՝ դրանք իրականացնելու համար՝ արտադրական գործընթացի ժամանակ քիմիական մշակումից հրաժարվելուց սկսած, մինչև օդի շրջանառության համակարգի բարելավում և մրգերի չորացման տեխնոլոգիական փոփոխություն: Սա լուծում է հումքի հետ կապված խնդիրները՝ նվազեցնելով ջրի և էներգիայի սպառումը՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով թափոններով աղտոտումը: ՌԱՄԱ-ի իրականացման աստիճանական քաղաքականությունը մեկնարկել է ցածր և միջին ծախսերի միջոցառումներով և ավարտվել արտադրական գործընթացում արևային էներգիայի օգտագործման բարելավմամբ: ՌԱՄԱ միջոցառումներն իրականացվել են ՌԱՄԱ փորձագիտական աուդիտներին համապատասխան:

- 1. Ռեսուրսների կառավարման բարելավում՝ լավ տնտեսվարման ներդրմամբ:**
- 2. Վտանգավոր քիմիական նյութերի և հոսքաջրերի նվազեցում՝ վերաօգտագործման միջոցով:**
- 3. Արտադրանքի պահպանման ժամկետի երկարացման նպատակով ծծմբի փոխարեն ազոտի օգտագործում (պատրաստի արտադրանքի պահպանման նոր մոտեցում):** Սա փոխարինում է տարեկան 25 կգ ծծմբի օգտագործումը որպես ֆունդացիոն՝ ծխահարող միջոց՝ նվազեցնելով SO₂ արտանետումները և արտադրության ծախսերը: Երրորդ ողողման ջուրը կրկին օգտագործվել է հումքի (թարմ մրգերի) նախնական լվացման համար: Ինչը հանգեցրեց լվացման գործընթացի համար ջրի սպառման կրճատման 30%-ով: Առաջնային լվացման գործընթացի արդյունքում առաջացող կեղտաջրերն այժմ օգտագործվում են դաշտի ոռոգման համար:
- 4. Էներգիայի սպառման կրճատում գործընթացի տեխնիկայի բարելավման, սարքավորումների փոփոխման միջոցով:** Օդափոխման խողովակների երկարությունը/բարձրությունը (երկու անգամ) կրճատելով՝ չորացման գործընթացն արագացվել է 20%-ով, իսկ էներգիայի սպառումը (էլեկտրաէներգիա, գազ) ընդհանուր առմամբ կրճատվել է 20%-ով: Երկաստիճան էլեկտրական հաշվիչի տեղադրումը, երկակի սակագնից օգտվելու ավելի լավ վերահսկման հետ միասին, հանգեցրել է էլեկտրաէներգիայի սպառման՝ տարեկան 8% խնայողության: Տեղադրվել են նաև երեք կոմպլեկտիվ արևային չորանոց և արևային ջրատաքացուցիչ՝ խուսափելով չվերականգնվող էներգիայի օգտագործումից:
- 5. Թափոնների վերաօգտագործում: Բույսերից առաջացած անխուսափելի թափոնները (ցողուն, կեղև, սերմեր, միջուկ) օգտագործվում են որպես թարմ կեր անասունների համար:** Ծիրանի կորիզն օգտագործվում է տեղում՝ հրուշակեղենի մեջ: Մնացած գյուղատնտեսական թափոններն օգտագործվում են կոմպոստացման համար:
- 6. Արտադրանքի մրցունակության բարելավում:**

Պահպանելով ձեռքբերումները ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

14 ՌԱՄԱ տարբերակներն իրականացվել են երկու փուլով: Նրանք կենտրոնացած էին լավ տնտեսվարման, քիմիական նյութերի կրճատման և կեղտաջրերը նվազագույնի հասցնելու, էներգիայի սպառման ու թափոնների առաջացման նվազեցման ու արտադրանքի մրցունակության բարձրացման վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

14 ՌԱՄԱ տարբերակ՝	Ենթդրույմներ	Խնայողություն	Հետվերադարձի ընդհանուր ժամկետ (տարիներ)
	(Եվրո)	(Եվրո/տարի)	
14 ՌԱՄԱ տարբերակ՝	4,620	1,470	3.1

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

14 ՌԱՄԱ տարբերակ՝	Էներգիա (կՎտ/տարի)	Ջուր (մ ³ /տարի)	Նյութեր (տ/տարի)	Թափոններ (տ/տարի)	CO ₂ (տ/տարի)
14 ՌԱՄԱ տարբերակ՝	34,500	1,500	0.3	0.2	0.3



ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱՋԿ-ի կողմից: Այս համատեքստում «Լուկաշին» ԱԿ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրին օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի շինարարական ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք www.eu4environment.org:

Այս հրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱՋԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չերնյավկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ: t.chernyavskaya@unido.org



Կովկասի ՏԲԿ
Հայկական ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374 115 75 148